

տովլը շէր մշակուած . բայց որովհետեւ  
ան թռչնիկներուն փորը կտացընե-  
նելու համար խիստ յարմար էր՝ իմ  
ծերուկ տէրս հաւնեցաւ ու գովեց  
զիս . “ Ապրիս ըսաւ , նայէ որ ատ  
” կերպով առաջ տանիս . շատ թրո-  
” չուն մէկէն կերակրելու համար  
” ատկէ ուրիշ ձամբայ չկայ ” : Այ  
խօսքին վրայ արթընցայ , ու զարմա-  
ցայ թէ աս երազս որչափ նման է  
իմ օրագիր շարադրելու վիճակիս :

Տետրակ մը գրուածքէն՝ կարդա-  
ցող մարդն ալ՝ կարդալ չգիտցողն ալ,  
զբաղմունք ունեցողն ալ՝ չունեցողն  
ալ , տանուտէրն ալ՝ տնեցիք ալ , ծերն  
ալ՝ տղան ալ , մեծ ու պղտիկ , էրիկ  
մարդ՝ կնիկ մարդ , ամէնքն ալ բաժին  
պիտի առնեն : Ավինդրեմ որ ամէն  
մարդ ձայնը քաշէ , ու ինքը իր կե-  
րակուրը գտնելէն ետե՛ ուրիշի հա-  
մար ցանուած հունտը վար չզարնէ .  
պիտի գիտնայ թէ ասիկայ արտ մըն  
է որ մէջը ամէն բան պիտի ցանուի .  
ինչուան ոլոռը և անպիտան կար-  
ծուած հունտերն ալ սիրող թռչուն  
կըգտնուի :

## ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

## ՓՐՈՒՔԸ ՃԵՐՄԵՀԵՆԵԼ :

Այսաւ մը մէջ այնչափ ջուր դիր որ  
Ճերմկցընելու կտորուանքդ մէջը կա-  
րենան ծածկուիլ . ան ջրին մէջ ձգէ  
կտոր մը պաղլեղ , անանկ որ ջուրը  
Ճերմկնայ , յետոյ կրակի վրայ դիր  
ինչուան որ սկսի եռալ . ան ատեն  
փղոսկրի կտորները մէջը ձգէ մէկ  
ժամի չափ , ու երբեմն երբեմն պղտի  
վրձինով շփէ : Այբոր աղէկ մը կը-  
Ճերմկին՝ դուրս հանէ ու կտաւի  
մէջ պըլլելով կամ սղոցածքի՝ մէջ թա-  
ղէ որ կամաց կամաց չորնայ ու չձա-  
թըուտի :

1. Թէսպէտէ Եւզու :

Փղոսկրը աս կերպով ալ կըձերմը-  
կի . սև սապոնը վրան հաւասար տա-  
րածէ ու շփէ . ետքը կրակի բռնէ ու  
ամէն դին հաւասար տաքցուր . Երբոր  
սապոնը կըսկսի եռալ , սրբէ ու չոր-  
ցուր փղոսկրը . ասանկով փղոսկրին  
վրայի կարմիր աղտերը կելլեն : Բայց  
թէ որ սապոնը ամէն կողմը հաւա-  
սար չտարածես կամ ամէն դիէն հա-  
ւասար չտաքցընես , փղոսկրը խատու-  
տիկ կըլլայ :

|| Դիւը երէայն առէն պահելու հնարք :

Այս կըլլայ կաթսայի մը մէջ դիր  
քիչ մը ջուր . աս կաթսային մէջտե-  
ղը ցցուած ձանկ մը պիտի ըլլայ մի՛  
կախելու ձանկին նման . ձանկին ծայ-  
րը ծծումբով օծուած պատրոյգ մը  
կապէ , ու պահէլ ուզած միսդ կաթ-  
սային մէջ դնելէն ետքը ան ծծմբոս  
պատրոյգը վառէ , կաթսային բերանն  
ալ հողէ խուփով մը ծածկէ , բայց  
անանկ ըլլայ խուփը որ կաթսային  
մէջ մտնէ , ու վարի եղերքը ջրին մէջ  
ծածկուին , որպէս զի վառած պատ-  
րուգիդ ծուխար՝ ֆու ծծմբային կազմ  
դուրս չելլէ : Այ կերպը հնարողը կը-  
սէ թէ ինքը շատ անգամ ինչուան  
ուժ օր պահած է միսը , ու թարմ  
մնէն ամենեին տարբերութիւն մը  
չէ ունեցած : Այ կերպով կրնայ պա-  
հուիլ նաև թարմ արմտիքներն ու  
քաղցուն՝ ինչուան տարի ու կէս :

## ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

ՕՏԱԿՈՒՐՈՒՆ ԽՐԱՄՈՎԸ ԿԱՄ ՀԱՐ ՕՐԲՆԱԿՈՎԸ Գ-  
տած մոլութիւնը շատ աւելի վխաս կռնէ և առաջ  
կերթայ ան աղցին մէջ՝ որ գեռիր առջի անմեղու-  
թիւնը պահած է , քան թէ ան աղցին մէջ որ ար-  
դէն աւրուած է . ինչպէս առողջ մարդն ալ մահու  
կապրի :

ՀԱՅՈՂՐԴԱՅ

1. Ծիրա :